

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱՐԼԻՎԱԶ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/27 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Ամառային համազգեստի լրակազմը /42-64 չափսի՝ չափսային աղյուսակի համապատասխանությունը համաձայնեցվում է Պատվիրատուի պահանջների հետ/ բաղկացած է աշխատանքային բաճկոնից (թվով 1 հատ), տաբատից (թվով 2 հատ), կեպիից (թվով 1 հատ), կարճաթև շապիկից (թվով 2 հատ): Ամառային բաճկոնը, տաբատները և կեպին պետք է կարվեն պոլիեսթերաբամբակային կտորից: Կտորը պետք է ունենա յուղաջրակայուն (MBO) և 50% կոնցենտրատով թթվային հիմքերից (защита от кислот с концентрацией 50% - K50) պաշտպանիչ հատկություն: Կտորի բաղադրությունը 35% բամբակ, 65% պոլիեսթեր, մակերեսային խտությունը - 245±5 գ/մ2: Կտորի պատռման բեռնվածությունը ըստ հիմքի պետք է կազմի ոչ պակաս 1,100Ն, ըստ միջնաթելի ոչ պակաս 800Ն, կտորի յուղակայունությունը / յուղանդրադարձման ցուցանիշը նախնական տեսքում պետք է կազմի 5 բալ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո ցուցանիշը չպետք է փոխվի: Կտորի թթվակայունության ցուցանիշը նախնական տեսքում պետք է կազմի 6 ժամ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո ցուցանիշը չպետք է փոխվի: Հագուստի գծային չափսերի փոփոխությունը թաց մշակումից հետո ըստ հիմքի պետք է կազմի ոչ ավել -2%, ըստ միջնաթելի - 1.5%: Հագուստի գունային համադրությունը՝ մուգ կապույտ գույնը (գույնի կոդը 19-3920TCX) համադրված ֆյուրոսցենտ լիմոնե դեղին գույնի հետ (գույնի կոդը 13-0630TN): Բաճկոնի ձևվածքն ուղիղ ուրվագծով, ներքևի հատվածում տեղադրված գոտի՝ ռեզինե մանժետով: Բաճկոնի բոլոր միացման կարերը մշակված են 5 թելանի մեքենայով: Թևատեղերը և ուսի կարերը մշակվում են զույգ կարերով: Երկարությունը գոտկատեղից 7-12 սմ ներքև: Բաճկոնը երկլանջ ծալովի օձիքով է, օձիքի վրա կտորե կախիչ և պիտակ՝ տեսականու չափսի մասին նշումով: Թևքերը՝</p>

ներկարված են, դաստակի հատվածում 5 սմ լայնությամբ ռեզինե մանժետով: Բաճկոնը կոճկվում է քամուց պաշտպանող կափույրի տակ տեղադրված նեյլոնե շղթայով: Պաշտպանող կափույրը միանում է առաջամասին 7 սմ երկարությամբ 3 հատ ինքնակաչուն ժապավեններով: Բաճկոնի ներքևի կողային հատվածում առկա է 2 ներսի գրպան, որնց մուտքի հատվածը մշակված է ֆյուրոսցենտ լիմոնե դեղին գույնի նեղ երիզներով, որոնց մեջտեղում տեղադրված է նեյլոնե շղթաներ: Բաճկոնն ունի նաև 1 - 2 վրադիր ծավալային գրպան կրծքամասի հատվածներում: Կրծքամասի գրպանները փակվում են կափույրներով՝ ընդ որում կափույրներն մշակվում են 2 կտորից, որից վերին հատվածինը մուգ կապույտ գույնի, իսկ ներքին հատվածինը ֆյուրոսցենտ լիմոնե դեղին գույնի՝ վերինից 1-2 մմ լայն: Կափույրը մշակվում է մի կողմից ուղիղ, իսկ մյուս կողմից շեղակի ձևվածքով: Բաճկոնի կրծքավանդակի հատվածի վրադիր գրպանը (ներք) մշակվում են գույգ կարերով, իսկ ծածկող կափույրների վրա տեղադրված են փոկեր՝ բացելուց գրպանները չաղտոտելու համար: Կրծքային գրպանները փակվում է կաչունային փականներով:

Բաճկոնի կրծքավանդակի ողջ շրջագծով, ինչպես նաև թևերին տեղադրված են 4 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ: Մեջքի հատվածում, ինչպես նաև թևերի ողջ շրջագծին լուսանդրադարձնող ժապավենները պետք է տեղադրվեն կրկնակի: Լուսանդրադարձնող ժապավենների հիմքը 30% բամբակ և 70% պոլիէսթեր է: Լուսանդրադարձնող ժապավենների լուսանդրադարձման գործակիցը 60°C ջերմաստիճանով 40 ցիկլ լվանալուց հետո չպետք է պակաս լինի 470 կժ/տկ.մ² ցուցանիշից: Բաճկոնի բոլոր զարդակարերը պետք է լինեն գույգ կարով՝ մշակված գույգ կարի մեքենայով: Բաճկոնի մեջքի մասում ասեղնագործման եղանակով դաջվում է **ՔԱՆԱԹԵՌ-ՉԵՅԹՈՒՆ** անվանումը, իսկ կրծքավանդակի ձախակողմյան գրպանի վրա վրադիր կտորի վրա ասեղնագործվում է Երևանի քաղաքապետարանի տարբերանշանը՝ պատկերների համաչափության պահպանմամբ: Մեջքի ասեղնագործման և կրծքի լոգոյի չափսերը լրացուցիչ համաձայնեցվում են պատվիրատուի հետ: Բաճկոնի ներսի կողմում՝ ներքևից 15 սմ բարձրության վրա կարվում է նեյլոնից տեղեկատվական պիտակ, որի մեջ նշվում են արտադրողի տվյալները / վավերապայմանները, հագուստի չափսը, հագուստի համառոտ նկարագիրը և խնամքի վերաբերյալ հրահանգ: Տաբատը ուղիղ ձևվածքի; Տաբատը ունի առջևից 2 կողային ներսի գրպաններ և 1 - 2 վրադիր ծավալային գրպաններ ծնկամասի հատվածում: Կողային ներսի գրպանների մուտքի ձևվածքը շեղ է, որոնց մուտքի հատվածն մշակված է ֆյուրոսցենտ լիմոնե դեղին գույնի նեղ երիզներով: Վրադիր գրպանները փակվում են կափույրներով՝ ընդ որում կափույրներն մշակվում են 2 կտորից, որից վերին հատվածինն մուգ կապույտ գույնի, իսկ ներքին հատվածինն ֆյուրոսցենտ լիմոնե դեղին գույնի՝ վերինից 1-2 մմ լայն: Վրադիր գրպանները մշակվում են գույգ կարերով, իսկ ծածկող կափույրների վրա տեղադրված են փոկեր՝ բացելուց գրպաններն չաղտոտելու համար: Գրպանները փակվում են կաչունային փականներով: Տաբատի գոտին 4 սմ լայնությամբ է, որի վրա կան 5 կամրջակ՝ գոտին անցկացնելու համար: Առաջամասը կոճկվում է նեյլոնե շղթայով և

կոճակով: Տաքատի գոտու մեջ տեղադրված է 3.5 - 4 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիբլետանման ռեզին՝ նախատեսված տաքատի չափսն կարգավորելու համար: Տաքատի ծնկամասերից ներքև տեղադրված են 4 սմ լայնությամբ կրկնակի լուսանդրադարձնող ժապավեններ, Լուսանդրադարձնող ժապավենների հիմքը 30% բամբակ և 70% պոլիէթեր է: Լուսանդրադարձնող ժապավենների լուսանդրադարձման գործակիցը 60°C ջերմաստիճանով 40 ցիկլ լվանալուց հետո չպետք է պակաս լինի 470 կՃ/ռկ.մ2 ցուցանիշից: Տաքատի բոլոր զարդակարերը պետք է լինեն զույգ կարով՝ մշակված զույգ կարի մեքենայով: Կեպին կարվում է մուգ կապույտ գույնի կտորից, ներսի մասում ինքնասոսնձվող ոչ գործվածքային կտորից, ուժեղացված գլխարկահովհարով, դիմային հատվածում ասեղնագործման կամ դաջման եղակակով գրվում է ՔԱՆԱՔԵՌ-ՉԵՅԹՈՒՆ անվանումը: Շապիկը կարված է 160±5գ/մ2 մակերեսային խտությամբ բարձրորակ պենյա կոմպակտ կտորից, Գործվածքի բաղադրությունը 95% բամբակ, 5% էլաստան: Շապիկը կարճաթև է, վզի կլոր բացվածքով, կլոր օձիքը բարձրորակ պենյա Ռիբանա կտորե գործվածքից: Գծային չափերի փոփոխությունը լվանալուց հետո չպետք է գերազանցի 2%: Կտորի հիմնական գույնը մուգ կապույտն է (գույնի կոդը 19-3920TCX), պարտադիր պատվիրատուի հետ նախապես համաձայնեցնելով: Թելը, որից կարվելու են շապիկները 100 % բամբակյա բարձր որակի: Շապիկի մեջքի մասում բարձրորակ տպագրական ներկով դաջվում է ՔԱՆԱՔԵՌ-ՉԵՅԹՈՒՆ անվանումը կամ անվանման հապավումը: Շապիկի մեջքամասի վերին եզրի կարի տակից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը կատարվում է թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով: Յուրաքանչյուր 2 շապիկ դրվում է մեկ տոպրակի մեջ: Տոպրակները պիտակավորված են, որոնց վրա նշված է տեսականու չափսը, անվանումը, քանակը: Աշխատանքային կարճաճիտք կոշիկը /չափսերը 37-46/ նախատեսված աշխատակիցների անվտանգության ապահովման համար: Կոշիկը կարճաճիտք է, արտաքին տեսքը սպորտային ոճի, թեթև, հարմար ամենօրյա կրման համար: Կոշիկը բաղկացած է կոշկերեսի երեսամասից, հետնամասից, կարճ ճտքային փափուկ եզրակից, լեզվակից, հիմնական ներդիրից, ներբանից: Կոշիկի երեսամասը, հետնամասը, ճտքի եզրակի և լեզվակի արտաքին շերտերը արտադրվում են 1.3 - 1.5 մմ հաստությամբ բնական SOFT տեսակի հարթ կաշվից՝ սև գույնի, առանց նակատի (արգելվում է օգտագործել սպիլով կամ խոզի կաշի): Առաջամասը մշակվում է հինգ դետալներից, որոնք միանում են միմյանց զույգ կարերով՝ մշակված հատուկ զույգ կարի մեքենայով: Առաջամասը միանում է վերին փափուկ եզրակին և ետևամասի ձևավոր դետալին ևս զույգ կարերով՝ մշակված հատուկ զույգ կարի մեքենայով: Կոշիկի կապումն իրականացվում է սև գույնի քուղերով՝ որոնք անցնում են 5 զույգ մետաղական փուլակներով: Զուղերը անջրանցիկ նյութից են՝ վերջամասը թերմոմշակում անցած 1.5սմ: Լեզվակը և ճտքային վերին փափուկ եզրակը մշակվում են եռաշերտ փաթեթով՝ վերին շերտը բնական կաշի, ներսի շերտը ոչխարի կաշի, իսկ մեջտեղում տեղադրված է սպունգանման նյութ: Կոշիկը ներսից ամբողջությամբ լրացուցիչ մշակվում է ոչ գործվածքային սոսնձապատ միջնապաստառով և

ոչխարի նրբակաշվով: Քթամասում և կրնկամասը ներսից մշակվում են 1.2 - 1.4մմ հաստության թերմոպլաստե նյութով: Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձով կարակցված, առնվազն 1.8 - 2.2 մմ հաստության բնական հումքից՝ պադոչից և կոշիկի համար նախատեսված 1.8մմ հաստության ստվարաթղթից, որոնց մեջտեղում տեղադրվում է մետաղական սուպինատոր: Արտաքին ներբանը պատրաստված է մաշակայուն, ջերմակայուն և ցրտադիմացկուն առաջին կարգի պոլիվինիլքլորիդից՝ արտահայտված պաշպանաշերտով: Կոշիկի տակամասի ամրեցման ամրությունը համաձայն ԳՕՍՏ 9292-82, իսկ ճկունությունը համաձայն ԳՕՍՏ 9718-88: Արտաքին ներբանը կոշիկին միանում է սոսնձման եղանակով, բարձր ճնշման տակ: Ներբանի արտաքին տեսքը և գույնը համաձայնեցվում են պատվիրատուի հետ: Կոշիկները պետք է արտադրված լինեն 2026թ-ից ոչ շուտ: Կոշիկի եզրակի արտաքին հատվածի վրա կարվում է սև գույնի արհեստական թավշյա կտոր, որի վրա տպվում է ՔԱՆԱՔԵՌ-ՉԵՅԹՈՒՆ անվանումը: Փաթեթավորումը՝ յուրաքանչյուր զույգը անհատական փաթեթավորմամբ, յուրաքանչյուր 10-12 զույգ տեղադրվում են մեկ արտաքին ստվարաթղթե արկղի մեջ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է Պատվիրատուի համաձայնեցմանը ներկայացնի մեկ լրակազմ օրինակ նմուշներ՝ արտաքին տեսքը սահմանված բոլոր ցուցանիշների հետ համաձայնեցնելու համար: Հաստատված նմուշն հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս և ենթակա է մուտքագրման՝ վերջին խմբաքանակը ներկայացնելիս: Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր, յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար, անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի պահանջով մատակարար կազմակերպությունը իր միջոցների հաշվին պետք է ներկայացնի բոլոր ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ ՀՀ-ում և/կամ ԵԱՏՄ- ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր փորձարկման եզրակացություն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

АРЛИВАЧ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом БР-ЕЦДЦПДР-26/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	